Կարգապահական գործ թիվ ԿԳ-19168

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 344-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/205-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՅԿ ԱՊՐԵՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների **պալատի (այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ՝ նաև Խորհուրդ),** նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Հայկ Ապրեսյանին (արտոնագիր՝ թիվ 2398) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.07.2019թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Հայկ Ապրեսյանն ունի 57.000 (հիսունյոթ հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2018 թվականի մայիսից 2019թ. ապրիլ (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

01.08.2019թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի թիվ 333-Ա/ԿԳ-19168 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Հայկ Ապրեսյանի կատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև**

Կանոնագիրք) 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը 08.08.2019թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 17.12.2019թ., ժամը՝ 19:48-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Հայկ Ապրեսյանը բացատրություն չի ներկայացրել:

Փաստաբանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Հայկ Ապրեսյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 22.05.2018թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),
2) փաստաբան Հայկ Ապրեսյանն ունի 57.000 (հիսունյոթ հազար) ՀՀ դրամ գումարի չափով 2018 թվականի մայիսից 2019թ. ապրիլ (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն: (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.07.2019թ. տրամադրված տեղեկանքով),
3) փաստաբան Հայկ Ապրեսյանն իր անդամավճարի պարտքը մարել է (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 17.12.2019թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Հայկ Ապրեսյանի (արտոնագիր՝ 2398, ստացված՝ 22.05.2018թ.) նկատմամբ 2018-2019թթ. ընկած ժամանակահատվածում անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հայկ Ապրեսյանի նկատմամբ կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ *փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ*

կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:*

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի. «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգի» **(այսուհետև նաև՝ Կարգ)** 7-րդ կետի՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության»:*

Համաձայն Կարգի 17-րդ կետի. *«Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել»:*

Նշված Կարգը հաստատվել է 26.12.2013թ.-ին, ուստի 16-րդ և 17-րդ կետերում նշված ժամկետները պետք է հաշվարկել այդ ժամանակահատվածից սկսած:

Վերոնշված կանոնների վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանը ենթակա է պատասխանատվության, բացառությամբ Կարգի 17-րդ կետով սահմանված դեպքի, որի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների պարտադիր առկայությունը՝

- ✓ կարգապահական վարույթը պետք է հարուցված լինի առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի նկատմամբ և
- ✓ մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելն անդամավճարի պարտքը պետք է ամբողջությամբ մարված լինի:

Սույն դեպքում, համաձայն 17.12.2019թ.-ին ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի տեղեկանքի, Հայկ Ապրեսյանն իր անդամավճարի պարտքը մարել է:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքից հետևում է, որ փաստաբան Հայկ Ապրեսյանի նկատմամբ նախկինում չի կիրառվել Պալատի Կարգի 17-րդ կետը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, Կարգի 17-րդ կետով, Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Հայկ Ապրեսյանի (արտոնագիր՝ թիվ 2398) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Պալատի խորհրդի 26.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Հայկ Ապրեսյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյան

17 դեկտեմբերի, 2019թ.
թիվ ԿԳ/205-Ա
ք. Երևան